

ԵՂԻՍԱԲԷԹ ԳԸԼՊԸՅԸԳԵԱՆ-ՇՄԱԻՈՆԵԱՆ

ԱՐԻԻՆՈՏ

ՃԱՆԱՊԱՐՀ

ՓՈՐԹՄՄՈՒԹ

2024

ԱՐԻԻՆՈՏ ՃԱՆԱՊԱՐՀ

ԾԱՆՕԹ.-

Այս գրքոյկին առաջին տպագրութիւնը իրագործուած է Պէյրութ, Լիբանան, 1985 թուականին, «Չարթօնք» տպարանին մէջ:

Ներկայ միայն թուայնացեալ հրատարակութիւնը կը միտի յուշագրութիւնը մատչելի դարձնել ընթերցողներու աւելի լայն շրջանակի:

ԵՂԻՍԱԲԷԹ ԳԸԼՊԸՅԸԳԵԱՆ-ՇՄԱԻՈՆԵԱՆ

ԱՐԻԻՆՈՏ

ՃԱՆԱՊԱՐՀ

ՓՈՐԹՄՄՈՒԹ

2024

ՉԾՆ

Մեծ Եղեռնի 70-ամեակին առիթով, մեծ-մօրս այս յուշագրութիւնը կը ձօնեմ Յեղասպանութեան բոլոր զոհերու յիշատակին, բայց մանաւանդ թրքական գեհեներէն վերապրողներուն եւ անոնց շառաւիղներուն: Վերապրողներուն եւ անոնց շառաւիղներուն, որոնք օր մը անպայման պիտի իրականացնեն Մեծ Երազը մեր ժողովուրդին:

Մ. Շ.



Հեղինակուհին՝ Եղիսաբեթ Գրլայդգեան, իր ամուսնին՝
Ճանիկ Շմառնեանի եւ երեք զաւակներուն հետ,
Կիլիկիոյ պարպումէն քիչ ետք:

Ծնած եմ 1900 թուականին, Միվրիհիսար քաղաքը: Հօրս մէկ հատիկն էի: Ինձմէ առաջ եղբայր մը ունեցած եմ եղեր, ինձմէ ետք ալ՝ քոյր մը, որոնք մեռած են: Իսկ հայրս ալ վեց տարեկանիս կորսնցուցած ըլլալով՝ որբ եմ մեծցած:

Հին ժամանակները որբին մեծ պատիւ կ'ընէին ու հոգ կը տանէին: Թէ՛ դպրոցին մէջ եւ թէ՛ ազգականներու՝ բոլորը զիս կը սիրէին ու կը գուրգուրային վրաս: Գրեթէ ամէն տարի դասարանիս առաջինը կը ներկայանայի եւ մեզի ոսկեզօծ խաչ կու տային տեղւոյն *քայմաքամ*ին ձեռքովը: Խեղճ մայրս կու լար՝ մաղթելով որ հայրս ողջ ըլլար եւ աչքովը տեսնէր այդ պահը:

1915 թուականին, չեմ յիշեր ո՛ր ամսուն, Միվրիհիսարի Հռիփսիմեանց վարժարանին վկայականը

ձեռքիս, արքայի ճամբան բռնեցինք մայրս, հորեղբայրս, հորաքոյրս եւ հորեղբորս կինը, որ հագիւ տարուան մը հարս էր: Մեզ քշեցին Էսկի-Շեհիր, անկէ ալ Գոնիա, Էրէյլի, Քաթմա, Իսլահիէ, Օսմանիէ: Խեղճ հորեղբորս կինը ծննդաբերութեան ատեն ի՛նչ ցաւալի զրկանքներով վրանին տակ աղջիկ մը ունեցաւ՝ առանց խնամքի, առանց ուտելիքի:

Յանկարծ *ժանտարմանները* վայ հասան «*եսալլա սելքիէլթ*» (հայտէ՛, տարագրութիւն) ըսելով: Ինչ ընելիքնիս շուարեցանք: Երախան ցոյց տուինք: *ժանտարմա* մը զայրացած պոռաց: Ա՛խ, խեղճ հորեղբորս ծեծ մը քաշեցին, սիրտ չի՛ դիմանար...: Բոլորս մէկ լացինք: Անկէ յետոյ հարսերնիս հիւանդացաւ ու երախան մեռաւ: Յետոյ ինքն ալ ճամբան, կառքին մէջ, մեռաւ: Հագիւ երկու տարուան հարս՝ Տիպսի թաղեցինք զինք:

Հոնկէ մեզ քշեցին դէպի Մեսքէնէ, ուր միայն ջուրի ճամբայ կար: Ժողովուրդին վիճակը ցաւալի էր: Ո՛ր կողմ երթայիր՝ կողոպուտ ու ծեծ: Ուտելիք չկար:

Ուրիշներու նայելով, մենք բաւական դրամ ունէինք: Մինչեւ Տէր-Չոր հասանք առանց քալելու, միշտ կառքով՝ երկու ժամուան համար հինգ օսմանեան ոսկի վճարելով: Մեր կառքին քովէն բոպիկ հիւանդներ կը քալէին:

Սիրտս չէր դիմանար: Վերջապէս մենք ալ ուրիշներու վիճակին հասանք: Տէր-Չոր երեսուն օսմանեան տալով *վեսիքա* (անցագիր) հանեցինք, որպէսզի քաղաքին մէջ տեղաւորուինք: Հոն սենեակ մը վարձեցինք ու ներս մտանք: Բոլորս մէկ հիւանդացանք հոն: Մէկը չկար որ ջուր տար կամ ապուր մը եփէր: Ինչ որ է, առանց բժիշկի լաւացանք:

Ես շատ երկար մազեր ունէի, սանտրելու ճար

չկար: Խեղճ մայրս մանչու մը պէս կտրեց իր այնքան գուրգուրած մազերս:

Երբ քիչ մը հանգստացանք, հօրեղբայրս ելաւ նապարավաճառի խանութ մը բացաւ ու սկսաւ ապրուստը շահիլ: Միայն մենք չէինք: Բոլոր արհեստաւոր հայերը իրենց արհեստը սկսան գործադրել, այնպէս որ եթէ Տէր-Չորի շուկան պտըտէիր՝ ամէն տեղ հայ կը տեսնէիր ու հայերէն կը լսէիր:

Տեղւոյն *մուլթասարըֆը* շատ հայասեր էր. որբերը հաւաքեց ու որբանոց բացաւ, հիւանդները հիւանդանոց դրաւ, որբեւայրիներուն օրական հաց ու ճաշ սկսաւ տալ, նոյնիսկ որբերէն սկառուտական խումբ կազմեց: Երեւակայեցէք՝ Տէր-Չորը դարձած էր Հայաստան եւ տեղացի արաբները կ'ըսէին թէ *մուլթասարըֆը* «կեաւոր», այսինքն՝ անհաւատ է:

Վրայ հասաւ ողբերգութիւնը: *Մուլթասարըֆը* փսխուեցաւ: Եկաւ կարճ, գոռոզ վալի մը: Ուրկէ՞ բերին: Տէր-Չորի փողոցները շրջագայել յետոյ, «անմիջապէս հայոց թիւը կ'ուզեմ» սպառնաց: Հետեւեալ օրը մարդահամար ըրին: Երբ ցանկը ձեռքը անցաւ, խենդացաւ հայոց թիւին ի տես: Մունետիկը անմիջապէս սկսաւ կանչել տեղացի ժողովուրդին թէ՛ ով որ հայ պահէ մօտը, խստօրէն պիտի պատժուի:

Ութ օր չանցած մեզ գիշերանց կամուրջէն դէպի դուրս քշեցին: Ի՛նչ ցաւալի վայրկեան: Տեսարանը աներեւակայելիօրէն յուզիչ էր: Երբ այս տողերը կը գրեմ, կարծես թէ նոյն պահը կ'ապրիմ. սիրտս տրոփել կը սկսի:

Մարդիկ գիրար կորսնցուցին: Կամուրջէն գետ ինկող եղաւ: Գոռում-գոչում, ձայներնիս երկինք ելաւ: Կէս գիշերին մեզ տեղ մը կեցուցին: Մարդիկ սկսան գիրար փնտռել՝ Կիրակոս, Մարկոս գոչելով: Յոգնած,

դադրած, առանց ինչքի, ինքզինքնիս կորսնցուցած էինք:

Առաւօտուն երբ լոյսը բացուեցաւ, *ժանտարմա-*ները եկան մեզ ձիերով քշեցին դէպի անապատ: Մենք ալ ուրիշներու պէս քալել սկսանք: Նախ Մուրատի եզերքը կայարան մը մնացինք քանի մը օր, բայց վայրենի մարդիկ մեզ հոնկէ ալ տարին: Քանի մը օր քալելէ յետոյ հասանք Սուվար: Հոն աւելի բարբարոս *ժանտարմա*ներ մեզ յանձնեցին չեթէներու, որոնք խիստ անգութ էին եւ հայերէն ալ գիտէին: Յետոյ իմացանք որ Վանի չեթէներն են եղեր: Արդէն ամէն օր մեզի կը հարցնէին թէ ո՛ր տեղացի ենք: Վա՛յ որ մէկը գէլթունցի կամ վանեցի եմ ըսէր...:

Կացութիւնը անտանելի էր Սուվարի մէջ: Տեսա-նելի էրիկ մարդիկը հաւաքեցին տարին խարխուլ գօրանոց մը, անկէ ալ փոխադրեցին ու մորթեցին զանոնք, իսկ մեզ ալ քշեցին դէպի անապատ: Դեռ չտեսնուած չարչարանքներ սկսան գործադրել մեր վրայ:

ճամբայ չկար որ քալէինք, ջուր չկար որ խմէինք: Ամառուան տօթակէզ արեւը մեզ կ'այրէր: Ուտելիք չունէինք որ ուտելով քիչ մը կազդուրուէինք: Վեր-ջապէս բարբարոս պետեւիները սկսան աղջիկ փախցնել, կիներ առեւանգել: Մենք ալ նոյնպէս կը հալածուէինք մեր բախտակիցներուն հետ:

Առաւօտ մը կանուխէն մեզ ճամբայ հանեցին: Մինչեւ կէսօր քալեցինք՝ մէջ մը արեւը ճակատնէս, մէջ մըն ալ՝ կոնակնէս: Մեզ կը տանէին ու կը բերէին: Ի վերջոյ ճամբուն մէջտեղը կեցուցին եւ ինչ տեսնեմ, թրքական *հայր* (կառք) մը եկաւ կեցաւ մեր քովը: Չեթէները ձիերով զայն շրջապատեցին, խորհրդակ-ցեցան մեր ճակատագրին մասին: Մենք ձեռքերնիս

բացած, աչքերնիս երկինք յառած, ծնրադիր կ'աղօթեինք ու կու լայինք որ եկողը մեզ փրկէ մեր այս վիճակէն եւ մենք մեր սիրելիներուն քովը մեռնինք: Այդ ինչ աղաչանք էր. ամէն ոք ի սրտէ կ'աղօթէր. բայց, ախ, Աստուած չսեց մրմունջը բիւրաւորներու, չգթաց մեր վրայ, անտէր թափառական հայուն վիճակին վրայ: Ս. Գիրքը կ'ըսէ. «Թագաւորներու սիրտը իմ ձեռքս է, ո՛ր կողմ ուզեմ՝ հոն կը դարձնեմ»: Աստուած ալ ուզեց որ մենք պատժուինք:

Գագանը իր կառքով գնաց: Մեզ անմիջապէս բաժնեցին խումբերու՝ Տէօրտիւնճի Օրտուէն դէպի Մարաշ, Այնթապ, Քիլիս, Ատանա եւլն.: Իսկ մենք Պուրաս վիլայէթին հոն մնացինք: Այդ գիշեր մեր քովը պահակ չկար: Գրեթէ բոլորը միւս խումբերուն հետ գացած էին, մեզմէ շատ հեռու:

Գալով մեզի, հայ ուշիմ երիտասարդներէն մի քանին պահակին քով երբ գացած էին, ըսեր էր. «Ինչ կեցած էք, փախէք, վաղը ձեզ պիտի մորթեն»: Այս լսելնուն պէս՝ բերնէ-բերան տարածելով, խումբ առ խումբ մարդիկ սկսան փախչիլ իրենց գաւկէն, մօրմէն, քրոջմէն, կնոջմէն՝ անձայն ու անշշուկ, իրենց սրտերէն լալով: Իսկ իմ հօրեղբայրս, որքան ալ պնդեցինք որ ինք ալ փախչի, վախցաւ ու ըսաւ. «Մերկ պիտի մնամ ու անօթի, այդպէս ես չեմ կրնար ապրիլ»:

Մեր բարեկամներէն 4-5 հոգի խոյս տալով ազատեցան: Երբ Հալէպ հասայ ու զանոնք տեսայ, որքա՛ն ցաւ զգացի հօրեղբօրս չփախչելուն համար:

Անկողին չունէինք: Իրարու քով կը թխմուէինք, իրարու կը պլլուէինք որ տաքնանք:

Օր մը, դեռ հօրեղբայրս մեր քովն էր, չեթէի մը ձին սատկած էր: Խումբ խումբ կը վազէինք որ միս փրցնենք եւ ուտենք: Ես ալ շատ ճարպիկ էի, վազեցի

հոն եւ թիթեղի կտորով մը սկսայ փրցնել: Մեզ խուզարկած էին որ նոյնիսկ զմելի մը մնացած չըլլար մօտերնիս. ասորը համար թիթեղով կը կտրէի միւր: Կռիւ եւ ծեծկոտուք եղաւ միսին համար: Ես բաւական մը փրցուցի եւ մօրս տուի, ապա խոտ սկսայ հաւաքել՝ եփելու համար: Օրերով անօթի մնացած էինք: Դրամ կար, ուտելիք չկար: Երբ միւր կ'եփէինք, հօրեղբօրս աչքին մէջ արցունքի կաթիլներ երեսացին, երեսը շուռ տուաւ ու գնաց:

Առաւօտ մը արթնցանք ու ինչ տեսնենք... հազարաւոր չեթէներ մեր վրայ կը խուժէին: Ակնթարթի մը մէջ այր մարդիկը հաւաքեցին: Այնպէս ըրին որ հայուն արու զաւակ չմնար: Արդէն 15 տարեկանէն վար արու չկար: Բոլորը մեռած էին: Անկէ վեր եղողները տարին մորթելու: Հայ ազգը բնաջինջ ընել էր նպատակնին, բայց չէին յաջողած: Երբ հօրեղբայրս բռնեցին տարին, սկսանք աղիոողորմ ճիշեր արձակել ու լալ: Անապատը թնդաց հայ քաջարի ազգին ձայնէն: Կեցած կը նայէինք մեր սիրելիներուն, մինչեւ որ աներեւութացան:

Լացել ու ողբէ յոգնած ժողովուրդը քուն մտաւ: Յանկարծ արար պետեւիները, մին՝ կօշիկ, ուրիշ մը՝ գլխարկ, երրորդ մը՝ ուսը հագուստներ առած մեզի մօտեցան: «Այս վերարկուն իմ տղուս է», «Այս կօշիկը իմ եղբօրս է» ըսելով՝ նորէն լացն ու կոծը սկսան:

Այդ գիշեր հոն մնալէ ետք, առաւօտուն մեզ ճամբայ հանեցին: Տէօրտիւնճի Օրտուի քով տեսանք որ միւս խումբին հետ ալ մեզի պէս վարուեր էին, բայց անոնք 18-20 տարեկան տղոց աղջկայ հագուստ հագցուցած ու պահած էին: Անոնք բնաւ չէին խօսեր, որպէսզի յայտնի չըլլան:

Օր մը երբ միասին կը քալէինք, չեթէները սկսան

հատիկ հատիկ փնտռել թե մանչ կա՞յ արդեօք: Մի քանին գտան եւ իրենց մայրերուն աչքին առջեւ մորթեցին ու դէպի անտառը գլորեցին: Մայր եղիր ու դիմացիր....:

Քալելով քալելով հասանք Շետառիէ: Ա՛խ, ի՛նչ վայրենի մարդիկ էին: Աստուած ինչպիսի՛ մարդիկ ստեղծեր էր հայերուն *գուլում* (կեղեքում) ընելու համար: Մենք սկսանք իշու միս ուտել: Չորս կին կ'ըլլայինք ու էշ մը կը մորթէինք: Ա՛խ, ի՛նչ չարչարանքով եւ առանց դանակի կը բաժնուէինք միսն ու եփելով կ'ուտէինք:

15 օր մնալէ յետոյ, լերան գագաթ մը պիտի քշուէինք ու հոն խուզարկուէինք: Շատեր իրենց ունեցած օսմանեան ոսկիները դեղահատի պէս կլլած էին: Մենք երկու օսմանեան հօրաքրոջս գուլպային տակ կարած էինք: Մայրս ալ դրամ պահած էր - իսկ ես ոչինչ ունէի, որպէսզի չվախնամ: Երբ խուզարկութեան կամ փորձութեան լեռը ելանք, աղաղակ ու լաց լսելով ապշեցանք: Բռնի՝ ձեռքովնին իբրեւ թէ դրամ կը փնտռէին, այլ պարզապէս աղջիկ պղծել էր կամքերնին: Աղջիկները իրար ետեւ կարգի շարուած, չեղէ մըն ալ թելերը քշտած՝ նստած դրամ կը հաւաքէր կին ու աղջիկ մերկացնելով: Ա՛խ, ի՛նչ վախնալիք բան: Բռնի պիտի մերկանաս որ դրամ չունենալդ ստուգուի: Ես ու քոյրս առանց չարչարանքի անցանք: Մայրս, ըսես, երբ դրամը քովէն ելաւ, ասելի խիստ նեղութեան ենթարկուեցաւ: Երբ խեղճս կը պոռար, ես իմ ականջներս գոցեցի որ չլսեմ մօրս աղիոգորմ ձայնը: Յետոյ երբ քովս եկաւ եւ իրարու փաթթուեցանք, ինք իմ արցունքներս կը սրբէր ես ալ՝ ի՛րը: Ականջիս փսփսաց այն ատեն թէ ինք մասնաւոր պոռացած է, որ զինք ձգեն:

Քանի մը օր հոն մնալէ յետոյ, մեզ այնպէս քշեցին որ՝ մէյ մը գառիվեր կը բարձրանայինք, մէյ մը գառիվար կ'իջնէինք վազելով: Այս ձեւով քանի ժամ կը վազէինք՝ չեմ գիտեր: Առաջ ինկողն ալ կը մորթէին, ետ մնացողն ալ:

Վերջապէս հեւասպառ, ուժասպառ հասանք կիրճի պէս տեղ մը, ուր մեզմէ առաջ հազարաւոր պետեւի գազաններ հաւաքուած՝ մեզ ջարդելու պատրաստուած էին: Մենք մեզի կ'ըսէինք. «Ա՛յ հերիք է, մեռնի՛նք հոս»: Սեւ ակնոցով *վալին* եկած եւ զինք պաշտպանող զինուորներով ու չեթէներով բարձր տեղ մը կանգնած էր: «Ով որ դրամ ունի՝ թո՛ղ տայ, ով որ չունի՝ այս արաքները զինք պիտի մորթեն» ըսաւ: Ժողովուրդը միաբերան գոչեց. «Թող գան, մենք ապրիլ չենք ուզեր ա՛լ»: Ոճրագործը ձեռքը վեր բարձրացնելով՝ արաքներուն «հայտե՛» մը ըսաւ: Կարծես թէ կարկուտ տեղաց վրանիս՝ «*Ես Ալլահ*» (Ո՛վ Աստուած) ելած ձայներուն չափ, եւ Աստուած չսեց իր գաւակներուն ձայնը: Ա՛խ, իմ մայրս զիս իր ծունկերուն տակ պահեց, որ չտեսնէ իմ խողխողուիլս: Կարծես թէ մտքի խանգարում մը կու գայ վրաս եւ ուղեղս չ'աշխատիր: Մարա՞ծ եմ թէ մեռած՝ չեմ գիտեր, միայն կը յիշեմ որ դիակներուն մէջէն կը փախչիմ արաք պետեւիի մը առաջնորդութեամբ: Չկրցայ նայիլ իսկ թէ ի՛նչ եղան մայրս ու հօրաքոյրս:

Երբ պետեւիին վրանը հասայ, տեսակ մը քունէ կամ երազէ արթնցածի պէս եղայ՝ զիս բերած արաքին բացած տոպրակին մէջ տեսնելով գիշերանոցս, մեր պզտիկ կարպետը եւ ճաշի փոքր կաթսան: Անմիջապէս սկսայ լալ եւ ողբալ: Այդ օրուրնէ սկսեալ այդ մարդուն երեսը չկրցայ նայիլ:

Յիշեցի թէ ի՛նչպէս մայրս ինձի ապաստան

դարձուցած էր իր ծունկերը, որպեսզի չտեսնեն սոսկալի տեսարանը, թե ի՞նչպես հորաքոյրս անդադար գիս կը քաջալերեր ըսելով, «Դուն որ պատմութեան գիրքին մէջ կարդացած ես չարչարանքները Հռիփսիմէի ու Գայեանէի, որոնք իրենց կրօնքը չփոխեցին կռապաշտութեամբ, անոնք Յիսուսի գիրկը գացին: Ահա՛ մեր ալ ժամը հասած է, ակնթարթի մը մէջ մենք ալ անոնց դասին պիտի միանանք: Երբեք մի՛ վախնար, սիրելի քոյրս, ես քովդ եմ: Մենք Յիսուսի պիտի միանանք եւ մեր փառքը յաւիտեան է»: Այս խօսքերով գիս կը քաջալերեր, երբ մօրս գոռումը լսելով՝ ուզեցի ինքզինքս ազատել ծունկերուն տակէն: Ի՛նչ տեսնեմ: Մերկ կիներ՝ անդամահատուած մարմիններով՝ ասդին անդին կը փախչին, իսկ չեթէներ չորս կողմերնիս պաշարած են, որպեսզի ոչ ոք խոյս տայ: Արիւնը գետի պէս կը հոսեր: Ականջդ կը խլանար ձայներէն: Արդեօք վեր, երկինք չհասա՞ւ անոնց ձայնը:

Վերջապէս ուշակորոյս ինկած եմ՝ չեմ գիտեր քանի ժամ կամ քանի օր:

Երբ աչքերս բացի, տեսայ թէ արեւ կայ եւ աշխարհ իր տեղն է, նաեւ՝ մարդիկ կան ու կ'ապրին:

Այդ արաբին տունը ինծի համար դժոխք էր:

Սկսան գիս աշխատցնել: Խոշոր աղօրիք մը դրին առջեւս, որպեսզի ցորենը ալիւրի վերածեմ: Ոյժ չկար որ աղօրիքը պտըտցնէի: Գիշերները, ըսես, հազիւ քուն մը կ'անցընէի: Երագիս մէջ գիս կը հալածէին, կ'ուզէին մորթել, կը փախչէի, կը պռռայի: Վրանին կիներ՝ հայիոյելով՝ գիս կ'արթնցներ, որպեսզի չպռռամ:

Այժի մորթէ շինուած տիկով մը հեռու տեղէ իրենց համար ջուր պէտք էր կրէի: Մօտ երկու թիթեղ ջուր կ'առնէր ան: Նախ ոյժս չէր բաւեր, եւ յետոյ՝ զայն

լեցնելու կերպը կար: Ա՛խ, ի՛նչ չարչարանք. չեմ կրնար պատմել: Կէս անօթի-կէս կուշտ՝ չկրցայ դիմանալ: Արդէն իրենք ալ երես դարձուցին ինձմէ: Ստիպուած գացի ուրիշի մը քով. հո՛ն ալ գրեթէ նոյնը: Աս ալ չմոռնամ - գրեթէ ամէն արաբի վրանի մէջ հայ աղջիկ մը կար: Կ'աշխատէին օրն ի բուն: Սկսայ անոնց հետ ծանօթանալ եւ ինծի սիրտ տուին ու բախտիս հետ հաշտուեցայ:

Իմ գտնուած տեղս հարուստ էին, բայց շատ գործ կար, այնպէս որ չկրցայ դիմանալ: Ոչխարները մէկիկ-մէկիկ պիտի բերէի որ կթուին եւ կաթը եփուի, դեռ՝ թան ըրէ, ցախ հաւաքէ, ալիւր աղայ...: Հիւանդացայ եւ հեռացայ ու գացի մարդու մը քով, որ երկու կին ունէր՝ մէկը հայ, իզմիրցի Մարիամը, իսկ միւսը իր հարազատ արաբը: Երբ իրենց գացի՝ արաբ կինը խենդացաւ թէ այս ի՛նչ է, հայերը իր գլխուն կը հաւաքէ ամուսինը: Բայց մարդը շատ կը սիրէր հայերը: Ունէր երեք մանչեր, որոնք դեռ փոքր էին: Ունէին նաեւ շատ կովեր: Միշտ խնդիրը իմ վրաս կը դառնար: Կինը կ'ուզէր որ մեկնիմ, մարդը չէր ձգեր: Ես ալ չէի ուզեր երթալ այդ տունէն, քանի որ հայ մը կար, կը նստէինք ու կը խօսէինք: Կինը սկսաւ զիս ծեծել՝ որպէսզի փախչիմ ու երթամ:

Իմ գործս կով արածել էր: Գաւազանը ձեռքս՝ կովերուն ետեւէն կը վազէի, կը տանէի լեռներ ու ձորեր: Ուրիշներ ալ կը բերէին: Ինծի պէս կով արածող հայ տղաք ալ կային: Անոնց հետ ժամերս կ'անցընէի:

Օրին մէկը ինչպէս եղաւ՝ իմ կովերէս մէկը դրացիին կովերուն հետ խառնուեցաւ գնաց: Իրիկունը կինը համրեց որ կով մը պակաս է: Ա՛խ, ի՛նչ գաւազան իջաւ գլխուս: Զիչ մնաց որ մարէի իյնայի:

Դրացիները եկան ազատեցին զիս: Ասոր վրայ հայ կինը փախաւ իր քրոջը քով, որ իրեն պէս սպասուհի էր: Ան գնաց, ես մնացի: Բայց ի՞նչ: Ամէն օր ծեծ ու անօթութիւն: Գիշեր մը ես ալ փախայ անոնց քովը գացի: Բայց մարդը ետ դարձուց զիս: Մէկ-երկու օր անց նորէն փախայ: Դարձեալ մարդը զիս ծեծելով տուն տարաւ: Վերջապէս այդ հայերուն ըսի որ զիս դնեն այնպիսի տեղ մը, ուրկէ մարդը չհամարձակի զիս դարձնել: Իրաւ ալ, նորէն փախայ ու գացի հարս եւ փեսի մը քով ապաստանեցայ: Մարդը ա՛լ զիս չկրցաւ իր տունը տանիլ: Այսպիսով քիչ մը ծեծ ուտելէն հանգչեցաւ կոնակս: Անկէ ետք գացի ուրիշի մը քով: Ա՛լ բաւական սորված էի թէ՛ գործերը եւ թէ լեզուն: Նաեւ ճարպիկցած էի: Երբեք չէի յիշեր մայրս: Կարծես գիտակցութիւնս կորսնցուցած կենդանի արարած մըն էի: Ա՛լ կրնայի տիկով ջուր բերել, աղօրիքը քաշել: Լեզուս ալ քիչ մը երկնցած էր:

Նախ՝ այս արարները ձմեռը տեղ մը կը նստին, ամառը՝ ուրիշ տեղ: Մնայուն տեղ չունին: Որով տեղափոխուեցանք եւ ինծի հեռուէն ցոյց տուին թէ այսինչ տեղը ջուր կայ: Ես ալ՝ ինքնավստահ՝ շալկեցի տիկն ու արաբերէն երգելով գացի ու գտայ Եփրատ գետը, տիկը լեցուցի եւ վերադարձայ: Քանի մը ոտքի ճանապարհներ ըլլալով՝ սխալ ճամբայ բռներ էի: Կոնակս տիկը՝ քալէ հա՛ քալէ, ժամեր անցան: Յոգնած, անօթի ու ոտաբոյսիկ, մութն ալ վրայ հասած, սկսայ բարձրաձայն լալ: Աստուած իմ, ո՛ր պիտի մնամ: Մէկ վայրկեան կոնակէս վար չէի դրած այդ գարշելի ջուրի տոպրակը: Վերջապէս իրենք հասկցեր են որ ես ուշացեր եմ, սկսեր են զիս փնտռել անունս տալով: Քանի որ դաշտը արձագանգ կու տայ, լսեցի ձայներնին եւ վրաս հոգի եկաւ: Ձայնիս

ուղղութիւնը բռնելով, իրարու միացանք: Յոգնութիւնս սահման չունէր: Ա՛լ ոտքերուս վրայ կոխելու ոյժ չէր մնացած մէջս: Երբ վրան հասայ, մարդը աղուոր մըն ալ գերդաստանիս հայիոյեց: Նստեցայ տեղս: Այդ գիշեր բոլորովին գառանցեր եմ: Առտու նորէն գործի էի, այն ալ՝ չարաչար գործ:

Օր մը սաստիկ անօթութենէս այլեւս ոտքի վրայ կենալու ոյժ չունէի, կարծես հիւժած ըլլայի: Գետինը նստած ալիւր կ'աղայի որ կինը հաց եփէ: Ան ալ կը մաղէր՝ թեփը ինծի կ'եփէր: Վնաս չունէր. բայց գոնէ շատ ըլլար, ա՛ն ալ քիչ էր: Ես պզտիկ գրպան մը ունէի, մէջը ալիւր լեցուցի եւ ըսի թէ ջուր պիտի թափեմ: Արտօնեց: Գացի հեռուն եւ սկսայ ալիւրն ուտել այնպիսի ախորժակով՝ կարծես *փախլաւա* ըլլար: Այսպէս քանի մը անգամ շարունակեցի: Գործէս քիչ մը կ'ուշանայի: Կինը կասկածեր, ուշի ուշով քններ էր թէ ափով բան մը կ'ուտեմ: Անմիջապէս պոռաց որ քովը երթամ եւ ալիւրս աղամ: Երբ ներկայացայ՝ քիթս, բերանս մաքրած էի, բայց գրպանիս մէջ ալիւրի հետքերը երեւան ելան ու բռնուեցայ: Նորէն աղուոր ծեծ մը՝ բայց ի՛նչ ծեծ, Աստուած գիտէ:

Այսպիսով այդ գործն ալ ջուրը ինկաւ հետս: Ի՞նչ խորհիմ, ի՞նչ կերպով կշտանամ: Արդէն ամէն ինչ կորսնցուցած՝ իմ ընտանիքէս, հարազատներէս, միջավայրէս, հայութենէս բաժնուած՝ միայն փորս կը խորհիմ: Օր մը տանտիկնոջս ըսի թէ դրացի հայ աղջիկը եգիպտացորենն պիտի բերէ, կը խարկես՝ պայմանաւ որ իր տանտիկինը չիմանայ: Համաձայնեցաւ՝ խորհելով թէ ինք ալ պիտի օգտուէր: Ես մեր եգիպտացորենը գողցայ եւ տուի տանտիկնոջս. բայց երբ տեսաւ՝ կարծես նախազգացում ունեցաւ, ըսաւ. «Այս մէր եգիպտացորենն է», ու հայիոյանքին

տարափն իջաւ գլխու: Բայց ես՝ իբրեւ թէ անպարտ՝ երդումներս տեղացուցի իր գլխուն: Չերկարեմ: Ինք իր ձեռքով եփեց եւ կէսը իրեն տալով՝ միւս կէսն ալ խոշոր գրպանս լեցուցի ու հայ աղջկան հետ փայտ հաւաքելու պատրուակով լեռ ելանք եւ ճաթելու աստիճան անխնայ կերանք: Ես կ'ըսեմ. «Աղջիկ, կե՛ր», ինք կ'ըսէ. «Աղջիկ, կե՛ր»: Իրիկունը երբ տուն դարձայ, անգին գրպանէս բաժնուեցայ, քանի որ տանտիկինս ըսաւ. «Դուն այս գրպանով շատ բաներ կ'ընես»:

Տանտիկինս յդի էր: Արդէն երեք մանչ ունէր, բայց սոսկալի նախանձոտ ու գէշ էր: Շատ հարուստ ալ չէին արդէն: Չէ՞ որ կովերը ես կ'արածէի, անխնայ կը չարչարէր զիս: Ես փախայ եւ ուրիշ լաւ մէկու մը քով կեցայ շնորհիւ հայ ընկերներու:

Մեր մէջէն հայ աղջիկ մը ամուսնացած էր պետեւիի մը հետ, բայց շատ հանգիստ էր ու լաւ: Շատ կը յարգէին զինք: Օր մը ըսինք որ հաւաքուինք եւ այցելութեան երթանք Մարիամին: Ուրախանալով կ'երթայինք, բայց ես լսած էի թէ առաջուան տանտիկինս աղջիկ մը ունեցեր է՝ թէ՛ բերանին եւ թէ՛ յետոյքին ծակը գոց: Իլիկով աշխատէր են բայց չեն կրցած ծակ մը բանալ ու պզտիկը մեռեր է: Բոլոր շուրջի արաբներն ըսած են. «Հայ աղջիկը շատ չարչարեցիր եւ Աստուած պատժեց»: Հիմա մենք այդ վրանին առջեւէն պիտի անցնէինք: Ես որ ըմբոստ մէկն էի, արաբերէնով ըսի. «Տեսա՛ր, Աստուած հետս է. դուն յդի վիճակովդ զիս կը հալածէիր եւ կը ծեծէիր ու կը հայհոյէիր: Աստուած քեզ պատժեր է»: Մինչ ես կը խօսէի, գաւազանն առնելով ետեւէս վազեց, բայց մեր խումբն արդէն հասած էր վրանին առջեւ, այնպէս որ ես ալ իմ վրէժս առած եղայ կարծես այդպիսով:

Նոր արաբին, որուն քով կը մնայի, կինը շատ լաւ, խելոյն ու անգործունեայ էր: Ամէն բան ձեռքս էր: Քիչ մը շունչ առի: Արդէն թուրք կառավարութեան կողմէ զինուորներ եկած պատուիրած էին թէ՛ ով որ հայ կը պահէ՛ լաւ նայի անոր: Ասկէ ետք մեզի քիչ մը հաշտ աչքով կը նայէին: Կ'երեւի պատերազմը վերջ գտած էր:

Մինչեւ իրիկուն արեւուն տակ մնալէն աչքերս ցաւեցան: Դեղ չկար որ կաթեցնէի: Հանգիստ ալ չկար: Տանտիկինս երկու երախաներ ունէր, անոնց աչքերը հիւանդացան ու ես ալ վարակուեցայ անոնցմէ: Աչքիս մէկը գրեթէ չէր տեսներ: Գիշեր-ցերեկ քուն չունէի: Կու լայի ու կը պտըտէի: Կ'ըսէի. «Տէր Աստուած, ի՛նչ պիտի ըլլամ»: Մեծ կիները աչքիս կը նայէին ու *հարստ* (մեղք) կ'ըսէին: Ճամբայ չէի գիտեր որ փախչէի, Տէր-Չոր մտնէի: Անապատն էինք, աւազ ու արեւ:

Բայց նախախնամութիւնը ի՛նչ կը տնօրինէ՝ չենք գիտեր: Իմ գտնուած վրանիս տիրոջ գործընկերը տէր-գորցի էր. միշտ իր ձիով կու գար ու ես զինք կը պատուէի՝ թէ՛ իրեն եւ թէ ձիուն կերակուր տալով: Օր մը դարձեալ եկած էր: Սպասաւորութիւն ըրի: Գիշերը վրայ հասաւ: Գիտէք թէ ցաւերը գիշերը կը շատնան: Սկսայ նորէն լալ ու աղաչել Աստուծոյ: Առտու երբ ելայ՝ աչքերս ուռած վերջին ծայր՝ մարդը ինծի թրքերէնով հարցուց թէ գիշերն ինչո՞ւ կու լայի: Երբ անակնկալ կերպով այս բառերը հնչեցին ականջիս, չեմ գիտեր ի՛նչ եղայ, քիչ մնաց որ ուշքս կորսնցնէի: Թրքերէնով ըսի. «Չե՛ս տեսներ, աչքս կը ցաւի ու յոյս ալ չկայ: Եթէ կոյր ըլլամ՝ հոս, անապատը պիտի մեռնիմ»: Մարդը խղճահարեցաւ ու ըսաւ. «Կէտօրին Տէր-Չոր պիտի երթամ, եթէ կ'ուզես ինծի ընկերակ-

ցիր, միայն չըլլայ որ տունիները գիտնան»։ Ես ան-
միջապէս ոտքերը իյնալ ուզեցի, բայց մարդը չձգեց։

Անիկա եօթանասունը անց, մոլեռանդ մէկն էր։
Երբ Տէր-Չորէն կու գար, իր փոքրիկ գորգը կը փռէի՝
որպէսզի աղօթք ընէ։ Չիս իբրեւ անօրէն անմիջապէս
կը վռնտէր, որպէսզի աղօթքը չաւրուի։ Ահա՛ այսպիսի
մոլեռանդ մուսուլմանին հետ ճամբայ պիտի ելլէի ու
ամայի ճամբաներէն քալէի, բայց վստահ էի թէ մարդը
ինծի ուշադրութիւն իսկ պիտի չընէր։

Տանտիկինս ինծի տուած էր կարմիր գօտի մը, որ
իրենց քով շատ մեծ բան էր ու արժէք ալ ունէր։ Ունէի
նաեւ արծաթէ ապարանջան մը։ Ան ալ իրենք տուած
էին։ Չանոնք դարձուցի տանտիկնոջս։ Ա՛խ, այս
հայալ (արդար) արիւնս արդեօք մօրմէ՛ս թէ հօրմէս
ժառանգեր եմ։ Քովս մնային ու ծախէի՝ չէ՛ր ըլլար։
Կուշտ մը հաց գնէի եւ ուտէի՝ չէ՛ր ըլլար։

Հեռուէն երեւաց ձիուն գալը։ Տանտիկնոջս ըսի թէ
քիչ մը կովու թրիք կ'ուզեմ հաւաքել։ Քանի մը մղոն
երթալէ ետք, փէշիս թրիքը թափելով վազելս մէկ
եղաւ։ Հասայ մարդուն։ Ինք ձիով կ'երթար, ես՝
քալելով։ Անօրէնի ձեռք պէտք չէ դպցնէր։ Իմ ալ
ուզածս այդ էր, հոգ չէ, կը քալէի։

Մեր տեղէն մինչեւ Տէր-Չոր հինգ ժամ էր։
ճամբուն վրայ երկու կիներ իւղ կը տանէին Տէր-Չոր
ծախելու։ Անոնց հետ ծանօթացայ ու խօսելով կը
քալէինք։ Յանկարծ հանդիպեցանք թուրք զինուոր-
ներու վոհմակի մը։ Մեր ետեւէն կու գային։ Անոնցմէ
մին կ'ըսէր. «Այդ երեք կիներէն մին կեաւուր է»։
Միւսները կ'ըսէին. «Անկարելի է. հագուածքը՝
պետեւիի, խօսածը՝ սահուն արաբերէն. ալ ի՛նչ փաստ
կայ»։ Վիճելով եկան մեզ շրջապատեցին։ Ինծի
թրքերէն հարցուցին թէ հայ չե՛մ։ Բերնէս յանկարծ

արաբերեն հայհոյանք մը դուրս թաւ, ես ալ չեմ գիտեր ինչպէս: Այս իրարանցումին՝ ձիաւորը կանգ առաւ ու ըսաւ. «Այո, հայ է, սպասուհի է, քաղաք կը տանիմ»: Դուն իմ տեղս ըլլայիր՝ ի՞նչ կ'ընէիր այդ բարերարին, ով ընթերցող: Այդքան անօթութենէ, տառապանքէ, թուրք դահիճներէ փրկութիւնս Աստուծոյ հրաշքն էր արդէն: Գացի ձիաւորին ոտքերուն փաթթուեցայ ու աղօթքներ տեղացուցի: «Իմ պարտքս էր, աղջիկս», ըսաւ: Դարձեալ շարունակեցինք մեր ճամբան: Մութը կոխելու վրայ էր հիմա. սկսայ մտահոգուիլ թէ ո՞ր պիտի անցընեմ գիշերը: Եթէ ցերեկ ըլլար՝ անշուշտ ապաստան կը գտնէի, քանի որ ծանօթ էի քաղաքին:

Կամուրջէն պիտի անցնէինք, բայց առանց տաս *փարայի* չէին ձգեր, իսկ ես ոչինչ ունէի: Հին յիշատակներ պարզուեցան աչքիս, անբացատրելի յիշատակներ: Ես այդ կամուրջէն անցած էի բազմանդամ ընտանիքով, իմ սիրելիներովս պաշտպանուած. բայց հիմա միս միսակ, ցնցոտիներով, ոտաբոսակ կը յառաջանայի դէպի ձիաւորը: Երբ մարդը կանգ առաւ, ըսի թէ դրամ չունիմ որ տամ: «Հոգ չէ, ըսաւ, ես կու տամ»: Դարձեալ օրհնեցի զինք: Անցանք Տէր-Չորի փողոցներէն: Անդադար կը յիշէի. «Ասիկա այսինչ տեղն է, այսինչ փողոցը...»: Յանկարծ ձիաւորը կեցուց ձին տան մը առջեւ ու վար իջաւ: Աղերսագին հասկցուցի թէ գիշերով տեղ մը չունէի որ երթայի: Դուռը բացուեցաւ, զաւակները, թոռնիկները, հարսները դուրս թափեցան բոլորը մէկ՝ «Պապան հայ աղջիկ է բերեր» ըսելով, ու զիս ալ ներս առաջնորդեցին:

Երբ ներս մտայ եւ ճերմակ մարմարէ քարին վրայ կոխեցի, այն ատեն գիտցայ թէ որքա՛ն փոխուեր,

սեւցեր ու կոշտացեր էին ոտքերս: Ըստ իրենց սովորութեան, անմիջապէս թոնիրը վառեցին եւ թարմ հաց եփեցին: Անհամբեր կը սպասէի որ կտոր մըն ալ ինծի տան: Ձիաւորին տակ երկու բազմոց դրին, նստեցուցին: Կ'երեւի ամառ էր եղանակը որ դուրսը նստեցանք: Հացը լմնցաւ, մարդուն առջեւը դրին կարծեմ չորս լաւաշ եւ կարագ: Ձիաւորը գրեթէ մէկ լաւաշ կերաւ: Ես կը սպասէի որ կարգը ինծի գար: Մարդը քիթին տակէն բան մը ըսաւ եւ ի՛նչ տեսնեմ, զամբիւղով լաւաշը ուղղակի առջեւս դրուեցաւ: Երա՛գ էր թէ իրականութիւն: Սկսայ ուտել:

Չորս կողմս հաւաքուած թոռնիկները հարցումներ կ'ուղղէին – ո՛րտեղացի եմ, դպրոց գացե՞ր եմ, ձեռագործ գիտե՞մ, ո՛ւր կը պառկէի:

Բարեբաւս վերի յարկը ելաւ ննջելու. ինծի ալ սենեակ մը տուին որ պառկիմ ու հեռացան: Ներսը գտայ անկողին, վերմակ, բարձ ու ճրագ մը գլխուս վերեւ: Դուռը կղպեցի ու անկողին մտայ: Սկսայ յիշել անցեալս: Կը փաթթուէի մօրս կամ քրոջս: Ա՛խ, երանի՛ այդ օրերուն, որ ինձմէ խլուեցան: Իմ մօրս տուած այդ քաղցր համբոյրը, զիս իր կուրծքին սեղմած մայրական իր հոտը դրախտ կը բուրէին: Չկրցայ քնանալ, հակառակ անոր որ շատ յոգնած էի: Կէս-գիշերը անցած էր, դուռը բացի եւ դուրս գալով՝ քարին վրայ երկնցայ: Քունս տարեր է հոն: Առաւօտուն տան բնակիչները բոլորտիքս հաւաքուած՝ կը տեսնեն որ փափուկ անկողինը ձգած՝ չոր քարին վրայ անոյշ անոյշ կը քնանամ: Արթնցուցին զիս. յանցաւորի պէս զգացի: Երեսս լուացի ու հրաժեշտ տուի: Տանտիկինն ըսաւ. «Նայէ՛, աղջիկ, եթէ որեւէ տեղ չգտնաս՝ հոս եկուր»: Շնորհակալութիւն յայտնեցի ու դուրս ելայ:

Անցորդներուն ուշի ուշով կը նայէի: Ոստիկան տեսածիս պէս սիրտս դող կ'ելլէր. կարծես պիտի բռնէին ու անցագիր ուզէին: Հայու պէս հազած կիներ տեսայ: Արդեօք հա՞յ են, կը հարցնէի ես ինծի: Իմ հագուստս պետեւի ըլլալով, ոչ որ ուշադրութիւն կը դարձնէր վրաս: Իսկ ես անդադար հայ կը փնտռէի: Ի վերջոյ երկու կիներու մօտ վազեցի եւ հայերէնով հարցուցի թէ հա՞յ են: Ապշեցան կերպարանքէս, ետեւ գացին ու հարց տուին թէ հա՞յ եմ: Ըսի. «Այո, արաբներու մէջէն եկած եմ»: Չիս առին ու տուն տարին: Մայրերնին ոսպի ապուր եփած էր: Լեցուցին տուին, կուշտ մը կերայ եւ Աստծոյս փառք տուի: Առին զիս իրենց հետ գործի տարին: Այս թրքական օրէնքը մէյ մը հայերը սուրէ կ'անցընէ, յետոյ մնացած որբերուն աշխատանոց կը բանայ ու կը կերակրէ: Որբանո՞ց ըսեմ թէ աշխատանոց: Տեսուչը պոլսեցի թուրք հարիւրապետ մըն էր, 60-նոց, սպիտակահեր, ակնոցաւոր, մանրակազմ, զինուորական զգեստով: Երբ իրեն ներկայացայ, ինձմէ հեռու կեցած՝ հարցուց ո՛րտեղացի ըլլալս: Ըսի թէ սիվրիհիսարցի եմ: «Օ՛, հայրենակից գտայ» ըսաւ, մօտեցաւ ու հօրս եւ մօրս մասին հարցուց: «Թուրքերը ջարդեցին» ըսի: «Ոչ, ըսաւ, անիծեալ ըլլայ գերմանացին, որ ձեզ ջարդեց»: «Ո՛չ, գերմանացի չկար, թուրքերը հրաման ըրին եւ արաբները ջարդեցին. ես աչքերովս տեսայ, Էֆենտիս, ես սուտ չեմ խօսիր»:

Վերջապէս մարդը կարճ կապեց եւ ինծի 5 ձող տուաւ՝ գուլպայ հիւսելու: Խոհարարին ալ ըսաւ որ լաւ լոգցնեն զիս: Այն ատեն հաստ կտաւ կ'աշխատցնէին հայերուն: Պետեւի հագուստը հանեցի, շալվար մը եւ բանկոնի պէս բան մը հագայ ու սկսայ աշխատիլ:

Ճաշի ժամանակ երբ ապուր բաժնեցին, դգալով ուտելն անգամ մոռցած էի. սկսայ ափովս ուտել՝ բոլորին ծիծաղը վրաս հրաւիրելով:

Գալով աչքիս, օրը անգամ մը բժիշկի երթալով, ի վերջոյ ան լաւացաւ:

Կիրակի օրերը ազատ էինք դուրս ելլել պտըտելու:

Սա ալ ըսեմ որ ամէն օր հարիւրապետը կը ներկայանար մեր աշխատանոցը եւ մասնաւորաբար հետս կը խօսէր, իբրեւ հայրենակից կը հետաքրքրուէր ինձմով, ես ալ թրքերէնով կցկտուր պատասխաններ կու տայի:

Ամբողջ շաբաթը մնացի հոն պառկելով ու հոն աշխատելով: Ինծի պէս շատեր կային: Ոմանք իրենց արաբ ամուսիններէն խոյս տուած էին, ուրիշներ իրենց ծառայած տունէն: Բայց վայրի անապատէն փախած ոչ ոք կար ինձմէ գատ:

Երբ Կիրակի եղաւ, աղջիկներն իրենց հացերը բաժնուելով կանուխէն մեկնեցան: Մնացի մինակ: Ո՛ր երթամ: Ուր որ երթայի, հին յուշեր պիտի ելլէին դիմացս: Ինչ որ է, բռնեցի ճամբան ու գացի: Մեզի հայրենակից երկու շատ գեղեցիկ քոյրեր կային: Անոնցմէ մէկը պոլսեցի թուրք սպայ մը առած էր եւ մնացած Տէր-Չոր, ուր իրարու կ'այցելէինք առաջ: Գացի դուռերնին զարկի՛, զարկի՛ բացող չեղաւ: Պահականոց դիմելով հարցուցի թէ ո՛ր է Ալետին պէյը: Ինծի տուին զինուոր մը, որ զիս տարաւ իրենց տունը: Երկու քոյր մէկէն վրաս վազեցին, փաթթուեցանք կուշտ մը լացինք: Բաղնիք վառեցին, զիս լոգցուցին, հագուստ տուին: Սկսայ աղջկայ նմանիլ: Կէսօրին պէյը եկաւ, ան ալ դժուարաւ ճանչցաւ զիս: Հօրեղբօրս մասին հարցուց. շատ ցաւ գգաց: Առածը կ'ըսէ. «Գնա՛ մեռիր, եկուր սիրեմ»:

մնացի, պատմեցի ու պատմեցի զլիւս անցածները:

Առտու մազերս սանտրուած եւ կոկիկ հագած աշխատանոց դարձայ: «Եղիսաբէթը հայ աղջիկ է դարձեր» ըսին բոլորը: Մեր մեծաւորէն արտօնութիւն առի եւ ամէն իրիկուն իրենց կ'երթայի կը քնանայի:

Իրենցմէ իմացայ որ փռապան ամուսին ունեցող Կատարինէ դասընկերուհիս ալ հող է: Յաջորդ Կիրակի գացի զինք գտայ: Չիս տուն տարաւ ու վիզս փաթթուելով լաց մըն էր՝ փրթաւ: Տեսարանը յուզիչ էր: Երկուքս ալ կորսնցուցած էինք մեր գերդաստանները: Ուխտեցինք հարազատ քոյրեր մնալ իրարու: Ան ալ զիս լոգցուց եւ ինծի հագուստ տուաւ: Գիշերը քովը մնացի: Վրաս շատ կը գուրգուրար՝ մանաւանդ զիտնալուն համար ինչ ընտանիքի զաւակ ըլլալս:

Մեր անապատ տարուելէն առաջ, այս որբ աղջկան հայրն ու եղբայրը զինուոր կ'երթան: Մայրը իր հինգ զաւակներով կ'աքսորուի: Միայն երկու քոյր կը մնան: Բոլոր միւսները ճամբան կը մեռնին: Հազար ու մէկ չարչարանքներով, այս երկու քոյրերը Տէր-Չորի մէջ կը դառնան սպասուհի: Երբ տեղահանութեան նոր հրամանը կ'ելլէ, քոյրը կը տանին քաղաքէն, իսկ ինք ասդին-անդին փախչելով սելօրերը կ'անցընէ: Օր մը փողոցէն անցած ատեն՝ քոյրը արիւնյուայ, հոգեվարքի մէջ կը գտնէ: Կը փաթթուի ու կը հարցնէ թէ ի՞նչ ունի: «Չիս պղծեցին,- կ'ըսէ,- ա՛լ չեմ դիմանար, քոյրիկ ճան, պիտի մեռնիմ: Հեռացիր, թէ չէ քեզի ալ նոյնը կ'ընեն»: Լալով, ողբալով՝ աչքը ետին, կը հեռանայ քրոջմէն: Աստուած չէ՛ր տեսներ կոյս աղջիկները, հազիւ տաս տարեկան, անօթի ու մերկ: Ի՞նչ էր անոնց մեղքը:

Տիկնոջ մը քով եղած միջոցին, ան իրեն կերակուր կու տար որ փուռ տանի եփել տայ: Փութին մէջ տաս

հայ տղաք կային: Անոնք թուրք զինուորականին հացը կ'եփէին, ատոր համար ալ թուղթ ունէին եւ զերծ էին որեւէ վտանգէ: Երբ ընկերուհիս փողոց կը մնայ, կ'երթայ անոնց քով եւ կ'աղաչէ որ ալիւրի տոպրակներուն քով գիշերելու տեղ տան իրեն: Կը համաձայնին, դուռը վրան կը կղպեն ու կ'երթան:

Առտու գործաւորները կու գան հետը կատակ ընել կուզեն: Հացթուխը իր ընկերներուն կ'ըսէ. «Այս աղջիկը կնութեան պիտի առնեմ. մէկը չիօսի իրեն հետ»: Յետոյ զինք առնելով կը տանի իր բնակած տունը: 15 օր հայ ծերուկ կնոջ մը խնամքին յանձնած ձգելէ ետք, կնութեան կ'առնէ զինք, սակայն առանց պսակի, քանի որ այդ օրերուն քահանայ չկար հոն:

Խոնարհ, կրթեալ ամուսիններ էին: Ամուսինը բնիկ մարաշցի, Փնտըճաք գիւղէն էր: Ամբողջ ընտանիքը կորսնցուցած ըլլալով, զինուորականներու գործով ողջ մնացած էր: Իրենց քով մնացի իբրեւ տան մէկ անդամը. եւ երբ աշխատանոցը փակուեցաւ՝ ուղղակի իրենց գացի: Արդէն չէին ուզեր որ ես աշխատէի: Ունեցան մանչ գաւակ մըն ալ, որուն ես հոգ կը տանէի:

Օր մը իրենց տունը ճաշի հիւր մը եկաւ: Ներսը տաք խօսակցութեան մէջ էին. իսկ ես դուրսը երախան կը պտըտցնէի: Յանկարծ զիս կանչեցին: Ամչնալով ներս մտայ: Մարդը հայ երիտասարդ մըն էր, ուրիշ գիւղէ եկած՝ հիւանդանոցի քարտուղարի պաշտօնով: Երկու քարտուղարուհիներ հոնկէ դուրս դրուած ըլլալով, իմ ալ կրթութիւնս նկատի ունենալով, ուզած էր որ զինուորական հիւանդանոց աշխատանքի մտնեմ:

Հետեւեալ առտու գէշ-աղէկ հագած, գացի հիւանդանոց: Հոն տեսայ եօթ աղջիկներ, բոլորն ալ ինձմէ

գեղեցիկ ու վայելուչ հագած, իրենց մայրերուն ծունկին քովէն եկած, ո՛չ թէ ինծի պէս...:

Երբ զանգակը ներսէն զարկաւ, պահակը ըսաւ. «Ձեզմէ մէկը ներս թող մտնէ»: Ես անապարեցի ներս մտնել ու իբրեւ յարգանք *սէր թապիպ*ին (բժշկապետին)՝ գլխահակ բարեւտութիւնով կանգնեցայ: Ըսի թէ կ'ուզեմ հիւանդանոցը աշխատիլ: Մարդը զիս նիհար տեսնելով՝ ուզեց մերժել, բայց հայ երիտասարդը միջամտեց եւ առաւելութիւններս նշելով՝ ընդունիլ տուաւ զիս:

Պահակը զիս տարաւ յանձնեց Ճոհար քոյրիկին: Ուրախութիւնս սահման չունէր: Ճոհար քոյրիկն ալ դժգոհեցաւ նիհարութենէս, բայց երբ կեանքիս պատմութիւնն իմացաւ, խղճաց վրաս եւ զիս տարաւ պահարանին առջեւ ու ինծի տուաւ ճերմակ հագուստ եւ լաջակ, մահիճ մը, պզտիկ պահարան մը եւլն.:

18 աղջիկ էինք, բոլորս ալ հայ, մեծ մասամբ խարբերոցի, մէկ կարուհի, երկու լուացարարուհի, մնացեալները՝ հիւանդապահուհի: Մեծաւորնիս Օր. Ճոհարն էր, իսկ բժիշկնիս՝ խարբերոցի հայ մը, որուն անունը չեմ յիշեր:

Ճնորհիւ բժշկապետին մօտ երիտասարդ քարտուղարին բարեխօսութիւններուն, աշխատանքս բաւական տանելի կ'ըլլար: Անկողինները կը շտկէի, յետոյ հիւանդներուն նախաճաշը կու տայի, յետոյ գետնի մաքրութեան կ'անցնէի: Իմ սենեակիս հիւանդները բոլորն ալ պատերազմի վիրաւորներ էին: Մտիպուած էի տաք ջուր բերել խոհանոցէն եւ անոնց ձեռքերն ու երեսները լուալ: Ձեռքը վիրաւորուածներուն կերակուրն ալ ես կը կերցնէի: Գործս թեթեւ կու գար ինծի. իսկ հիւանդները զիս կը յարգէին ու կը պատուէին:

Հանգիստ անկողինը, լաւ սնունդն ու լաւ օդը զիս
այնքան լաւացուցին որ՝ զիս գիտցողները ա՛լ դժուար
կը ճանչնային զիս: ճերմակ ալ հագած՝ կարծես
պուպրիկ մը եղած ըլլայի: Հիւանդանոցին մէջ խօ-
սակցութեան նիւթ էի:

Գրեթէ ամէն Կիրակի արձակուրդ ունէինք:
Կէսօրէ ետք կ'երթայի ընկերուհիիս տունը:

Չեմ յիշեր որքան ատեն մնացի հոն, բայց երկար
ժամանակ չէր: Ծշուկներ սկսան թէ անգլիացին կը
մօտենար եւ թուրքը պարտուած էր:

Վիրաւորները շատցան այն աստիճան՝ որ մահին
չմնաց: Բակը, գետիները կը պատկէին: *Մէր թապիսը*
կու գար ու կ'ըսէր. «Չաւակներս, թշնամին կը մօտե-
նայ. ճիգ ըրէք որ անոր ձեռքը չիյնաք: Մէկ ձեռքով թէ
մէկ ոտքով՝ փախէք գացէք Պոլիս, մի՛ կենաք»: Ամէն
օր զինուոր կու գար ճակատէն եւ ամէն օր գացող
կ'ըլլար: Մէկ ամիս այսպէս շարունակուեցաւ: Անոնք
շատ տխուր էին, բայց մենք բոլոր աղջիկներով
ուրախ էինք որ «պապանիս» կու գայ:

Մեր Օր. Ճոհարը անգլերէն գիտէր: Սկսաւ մեզի
սորվեցնել:

Հիւանդանոցը այլեւս գրեթէ պիտի պարպուէր:
Մէր թապիսը կանչեց բոլոր աղջիկներս: Մենք
կարգով շարուեցանք: Իւրաքանչիւրս հարցաքննեց
թէ կ'ուզէինք մնա՞լ թէ երթալ: Իրենք պիտի երթային
թշնամին չհասած: Քաղաքը ծնողք ունեցող աղջիկ-
ներն ըսին թէ իրենք կը մնան, իսկ միւսները ուզեցին
երթալ: Ես շուարած էի թէ ի՛նչպէս թուրքերուն հետ
պիտի երթայինք: Երբ կարգը ինծի եկաւ, շրթունքիս
ծայրով «այո՛» մը ըսի, բայց՝ վախով: Չէ՛ որ իրենցմէ
կը փախչէինք: Չէ՛ որ «պապանիս»՝ անգլիացին կու
գար: Այս մտմտութներով կը տուայտէի, երբ առա-

շարկեցին որ հիւանդանոցին բակը բերան պէս թափուած սաւաններէն ու բուրդերէն առնենք հետերնիս: Հաւաքեցինք ինչ որ կրնայինք եւ ուղղուեցանք դէպի դուռը: Պահակը արգելք եղաւ մեր ելքին: Հրմշտուք մը սկսաւ: Ես՝ առիթէն օգտուելով՝ կծիկը դրի: Միւսներն ալ բաւական վիճաբանելէ յետոյ, ետեւէս հասան: Թուրք զինուորները «վա՛յ կեղծաւոր հայեր, մեզ խաբեցին» ըսելով հայիոյել սկսան, մինչ ես ուրախութենէս կը պարէի ու կ'երգէի, աղջիկներն ալ կ'ըսէին. «Եղիսաբէթը ինչ աղուոր ձայն ունի եղեր»: Յետոյ աղջիկները զիս հանգստացուցին, ըսելով թէ դիտմամբ խաբած էին *սէր թասպիսը*, որ-պէսզի առաւելագոյն օգուտը քաղեն:

Գացի ընկերուհիիս տունը: Շատ ուրախացաւ:

Քանի մը օր յետոյ շերիֆ մը եկաւ իր զինուորներով: Տէր-Չորը ցնծութեան մէջ էր: Արաբները սկսան մեզ նկատել իրենց քոյրերն ու եղբայրները, մանաւանդ որ հայոց անապատ քշուելէն յետոյ, մարախներ եկած ցանքերը կերած էին, եւ արաբները ատիկա նկատած էին իբրեւ Աստուծոյ պատուհասը, ըսելով. «Մենք անմեղ հայերու արեան ձեռք դպցուցինք. Աստուած ալ մեզ պատժեց»:

Անգլիացիները գալէ ետք, Տէր-Չորի արաբ երեւելիները ուզեցին անոնց ի պատիւ հացկերոյթ մը տալ զօրանոցի բակին մէջ: Մենք հոն ունէինք սքեմը հանած պանտրմացի քահանայ մը, որ զինուորական տեղեր կ'աշխատէր՝ մօրուքը ածիլած: Անգլիացիները երբ եկան՝ ան նորէն հագաւ իր սքեմը, երկնցուց մօրուքը եւ դարձաւ շնորհքով քահանայ: Տեղացիները զինք ալ հրաւիրեցին հացկերոյթին:

Ես ընելիք մը չունէի: Գացի դիտելու: Առաջին շաբթը նստած էին գիւղին մեծամեծները, մեր քահա-

նան ու տեղացի քրիստոնեաներու (կարծեմ սուրիանի կաթոլիկ էին, որոնք գէշ օրերուն մեզի չէին օգնած, բայց հիմա իրենց եկեղեցին կը տրամադրէին մեր քահանային՝ որ պատարագ մատուցէ) քահանան եւ անգլիացիներ: Բայց հագիւ կերակուրներով լի սկուտեղները գետին դրուած եւ մեր քահանային աղօթքը վերջացած, տեղացի աղքատ ժողովուրդը խուժեց կերակուրներուն վրայ եւ ակնթարթի մը մէջ գետինը պատառ մը չէր մնացած: Անգլիացիները անմիջապէս նկարեցին պատահածը. իսկ մեծամեծները ամօթէն գլխիկոր մնացին:

Ճաշկերոյթէն յետոյ անգլիացիները իւրաքանչիւրին մէկ արծաթ դրամ տուին: Կարծեմ 15 դրուշ էր օրուան համեմատ եւ մէկ ամսուան ուտելիքի կը բաւէր:

Հրաման ելաւ որ ուրիշ քաղաք մարդ ունեցողը, եթէ դրամ ունի, կրնայ երթալ Տէր-Չորէն: Հալէպէն սկսաւ կարաւան գալ ու ժողովուրդը տանիլ: Շատեր ալ ուտելիք եւ հագնելիք ունենալու սիրոյն՝ անգլիացի զինուորներու հետ Պաղտատ գացին:

Հայերուս մեծաւորը՝ Յարութիւն Էֆենտի, շատ լաւ մարդ էր: Միշտ զիս տեսնելուն՝ կ'ըսէր թէ զիս Հալէպ պիտի դրկէ: Իսկ ես կ'ըսէի թէ ո՛չ դրամ ունիմ, ո՛չ ալ ազգական, Հալէպ ո՞ւր պիտի մնամ, Պաղտատը կը նախընտրեմ:

Շուտով ընկերուհիս ալ մեկնեցաւ Հալէպ: Երթալէն առաջ ինծի խոստացաւ զիս անմիջապէս Հալէպ կանչել: Բուրդ, սաւան, ինչ որ ունէի տուի իրենց: Ինծի մնաց վերմակ մը, զոր առի ու գացի նախկին աշխատանոցը: Թէեւ գործ չկար, բայց դուռները բաց էին եւ որբերս հոն կը պառկէինք: Հիմա ա՛լ մէկ հատ իսկ թուրք չկար: Ուրախ էինք, կ'երգէինք հայերէն եւ

արաբներուն քովէն եկողներուն հայերէն կը սորվեցնէինք, որ խօսին ու գրեն: Այդ ժամանակ իրարու հանդէպ սէր, յարգանք ու գուրգուրանք ունէինք: Հայու համար հոգի կու տայինք: Կարծես մէկ մայր աշխարհ բերած էր մեզ: Ոչ կռիւ կար, ոչ ալ՝ հայհոյանք: Երբ Լիբանանի մէջ եղբայր եղբօր վրայ գէնք կը վերցնէ՝ շատ կը ցաւիմ թէ ինչո՞ւ այսպէս փոխուեր է իմ պատուական հայ ազգս:

Ընկերուհիիս Հալէպ երթալէն երկու շաբաթ ետք, օր մը, Յարութիւն էֆ. ինծի ըսաւ թէ յաջորդ օր զիս Հալէպ պիտի որկէ ութ կարաւաններու հետ: Ըսի թէ դրամս չի բաւեր: Ես միայն չորս *մենհիսիէ* կրցած էի մէկդի դնել հիւանդանոցի աշխատանքէս: Չիս տարաւ անգլիացիի մը քով, անոր ըսաւ թէ Հալէպ ազգականներուս մօտ կ'ուզէի երթալ, բայց դրամ չունէի, ան ալ ելաւ ութ *մենհիսիէ* տուաւ ինծի:

Ինկանք ճամբայ: Կառապանս ճանապարհին բաւական օգտակար դարձաւ թէ՛ սնունդիս տեսակէտով եւ թէ ալ խաներուն մէջ գիշերելու, որովհետեւ ո՛չ բաւարար սնունդ ունէի հետս եւ ոչ ալ դրամ՝ *խան* (իջեւանատուն) մտնելու:

Երբ ութ օր ետք հասանք Հալէպ եւ հեռուէն տուները տեսայ լոյսերով զարդարուած, սկսայ աղի աղի լալ, մտածելով որ ժամանակին ես ալ այդպիսի տուներու մէջ լոյսի շուրջ սիրելիներով անցուցած եմ զուարթ ժամանակ, բայց հիմա զանոնք բոլորն ալ կորսնցուցած եմ:

Անճրկած մնացեր էի: Մեծ քաղաք: Գիշեր: Ո՞ր պիտի երթայի: Մանաւանդ որ քիչ ետք ընկերուհիներս իրենց ազգականներուն պիտի երթային: Ահա այսպիսի փոթորկոտ մտածումներու մէջ էի, երբ կարաւանէն կանչեցին. «Եղիսաբէթ, քեզ փնտռող

կայ»։ Անմիջապես դուրս ցատկեցի եւ տեսայ երկու երիտասարդներ, որոնք ինծի ծանօթ իրենց ընտանիքը կը փնտռէին։ Ըսի թէ անոնք մեր կարաւանին հետ չէին եկած։ Յետոյ ուզեցի որ զիս գիշերը անցընելու համար տեղ մը տանին։ Ըսին թէ իրենք սրճարան մը կը մնան, բայց եթէ գիշերը կարաւանին մէջ անցընեմ՝ առտու կու գան զիս կը տանին։

Այդ գիշեր գրեթէ բոլորս ալ կառքին մէջ պառկեցանք։ Առտու կանուխ, հագիւ երեսս լուացած ու *Հայր մեր* մը ըսած, տեսայ որ հեռուէն երկու մարդիկը կու գան։ Եկան ու ըսին թէ Հալէպ ունէի մօրաքոյր մը, որ տիկինն էր Խոսրով Մարտիրոսեանին։ Այդ պահուն, սակայն, ուղեղս չէր աշխատեր եւ ըսի թէ ատանկ ազգական չունիմ։ Բայց եւ այնպէս հետեւեցայ իրենց։ Անցանք նեղ, սալայատակուած փողոցներէ։ Ես ոտաբոյսիկ էի։ Երբ հասանք խանութի մը առջեւ, սիվրիհիսարցի Ալթընթոփին Սարգիսին կինը՝ Տիկ. Նուարդ, տեսածին պէս զիս ճանչցաւ ու սկսաւ ծունկերը ծեծել, ըսելով. «Վա՛խ, այս աղջիկը այսպէ՛ս պիտի ըլլար»։

Վրան հագուստ մը նետելով, միասին ճամբայ ինկանք։ Հսկայ շէնքի մը առջեւ կեցաւ, դուռը զարկաւ։ Երբ դուռը բացուեցաւ, ինք յառաջացաւ դէպի ներս, իսկ ես դուռին ետեւ պահուրտեցայ՝ սպասելով պատահելիքին։ Յանկարծ երեւաց երկու ձեռքերը բացած մօրաքոյրս. «Ո՛ր է քոջս աղջիկը, ո՛ր է» պոռալով։ Ես ալ վազեցի ու փաթթուեցանք իրարու եւ լացինք թէ՛ մեր ուրախութենէն, թէ՛ մեր սիրելի կորուստներէն։ Այդ պահը անմոռանալի կը մնայ ինծի համար։ Տան անդամները, թուով ինը, բոլորն ալ՝ կեսուր, ներ, տագր ու զաւակներ, դուրս թափեցան ու աչքերնին վրաս չռեցին։

Այդ տան մէջ, սակայն, կեանքս աւելի տառապալից դարձաւ: Երբ մօրաքրոջս դէմքին կը նայէի, իր դէմքը, ձայնը, խօսելու եղանակը, շարժումները միշտ մայրս կը յիշեցնէին ու կը փոշկէի:

Հալէպ հասած էի 1918-ին, Վարդանանցէն օր մը առաջ: Յաջորդ օր զիս տարին եկեղեցիին բակի հանդէսին: Երբ երգուեցան «Լոեց: Ամպերը եկան ծածկեցին» ու այլ երգեր, այնքան յուզուեցայ որ սկսայ լալ ու հեկեկալ, հակառակ մօրաքրոջս սաստերուն:

Յետոյ կեանքս դարձաւ տաղտկալի: Մօրաքոյրս չէր զգար իմ ներքին տառապանքներս: Կատարեալ որբ մը կը զգայի ինքզինքս, մինչ շուրջս մարդիկ ցնծութեան մէջ էին:

Այդ ընկճեալ վիճակին մէջ էի, երբ մեր քաղաքէն զիս ուզող մը եկաւ ու ես ամուսնացայ Ճանիկ Սիմամոնեանին (Շմաւոնեան) հետ: Այդ օրերուն հրաման եկաւ թէ ամէն մարդ կրնար դառնալ իր հայրենիքը, քանի որ զինադադարը կնքուած էր: Մտածեցինք թէ քաղաքը ընելիք մը չունէինք, ոչ սիրելի կար, ոչ ալ՝ ինչք: Մնացինք Հալէպ, յետոյ անցանք Ատանա, ֆրանսական հոգատարութեան շրջանին: Շատ լաւ էինք հոն. ամուսինս կ'աշխատէր ու լաւ կը շահէր: Բայց երբ ֆրանսացիները պարպեցին Ատանան, եկանք հաստատուեցանք Պէյրութ, վրաններու տակ:

Ունեցայ վեց զաւակներ՝ չորս մանչ եւ երկու աղջիկ: Չաւակներէս երեքը մեռան եւ մնացին երկու աղջիկ եւ մէկ մանչ: 1955-ին ալ կորսնցուցի ամուսինս: Աղջիկներս ամուսնացան, նոյնպէս՝ մանչս, որուն հոգածութիւնը կը վայելեմ:

Մարդ արարածը, այսպէս, շատ փափուկ, եւ միեւնոյն ատեն ալ շատ տոկուն է: Այսքան չարիքներու, տառապանքի, ցաւի, սարսափի ու զրկանքի դիմադ-

րեցի շնորհիւ Աստծոյ նախախնամութեան: Իսկ
հիմա որ տարիքս 67-ն է, եկած եմ այն եզրակացու-
թեան՝ թէ աշխարհիս վրայ չկայ հանգիստ: Հանգիստը
միայն երկինքի մէջ է: Կը սպասեմ կեանքիս վախ-
ճանին, որ արժանանամ այդ օրուն:

